

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵ

Հարյուրամյա  
կալսրություն  
Տիգրան Մեծից  
առաջ



Purple hinged leaf  
var. effigies Sweetland & Fenzl.

Chrysanthemum

21-02-870

9(Ա7.925)  
Ժ. 91  
հշ.

№133/Ը

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱՆԵՐԻ

## ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յարյուրամյա կայսրություն

Տիգրան Մեծից առաջ

«ԱՊՈԼՈՆ»

Երևան - 1997

ԴՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(23)2

Մ 917

Համձին

## ՎԱՐԴԱՍ ԴԱԼԼԱՔՅԱՆԻ

գրքույկը նվիրվում է մեր բոլոր  
հերոսների հիշատակին, որ  
նախընտրեցին մահը տեսնել, քան  
հայրենի հողն ու պրեարանները  
պղծված

Մովսիսյան Ա.

Մ 917 Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը.  
Հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ:  
[Պատճագիտ. ուսումնասիրություն]. -Եր.:  
Ապոլոն, 1997.- 32 էջ

Մ 0503020913  
749(01)-97 97

ԳՄԴ 63.3(23)2

Դու պատկանում ես նախնական և քաջ ազգի,  
արդյունավոր ոչ միայն խոսքի և պիտանի՝  
խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ  
փառավոր գործերով, որոնք մենք կիշատակենք այս  
պատմության ընթացքում...

*Մովսես Խորենացի*

## ՆԱԽԱԲԱՆ

Կյանքում ամեն մի իրադարձություն ունենում է իր նշանակությունն ու հետագա ճակատագիրը: Այդպես էլ ժողովուրդների պատմության մեջ: Սակայն միշտ չէ, որ իրադարձություններն ունենում են իրենց կարևորությանն արժանի ճակատագիր: Դրանցից շատերը, գրի չարնվելով՝ մոռացվում են անհետ, մյուսները գրի են առնվում, բայց ժամանակի ընթացքում կորչում են դրանց հիշատակարանները: Լինում են նաև այնպիսիք, որոնց մասին հիշատակող արձանագրությունները, դարերով հողի տակ մնալուց հետո գտնվում, ընթերցվում, սակայն սխալ են մեկնաբանվում: Այս վերջինների թվին է պատկանում «կուտիական տիրապետություն» անվամբ հայտնի իրադարձությունների շղթան, որը Յին Արևելքի պատմության մեջ զբաղեցնում է շուրջ մեկ հարյուրամյակ:

Յին Միջագետքի Ք.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսին վերաբերող ամեն մի աշխատությունից կարելի է տեղեկանալ, որ միջագետքյան տիրակալ Նարամ-Սուենի (Ք.ա. 2236-2200թթ.) իշխանության վերջում նրա տերության վրա արշավեցին լեռնական կուտիական կուտիաները, որոնք տապալեցին նրան, ապա գերիշխեցին Առաջավոր Ասիայում:

Ովքե՞՞ր են այդ լեռնականները և որտեղից եկան նրանք:

Կուտիաների հայրենիքի տեղորոշման հարցում ուսումնասիրողները բաժանվում են մի քանի խմբի:

Առաջինն այն տեղադրում է Կորդվաց (Գորդիենյան, ալ-Զուլի) լեռների շրջանում<sup>1</sup>: Այս տեսակետը տարածում էր գտել անցյալ դարում և մեր դարի առաջին տասնամյակներին: Երկրորդ տեսակետի համաձայն կուտիների երկիրը (Կուտիում, Գուտիում<sup>2</sup>) գտնվել է Տիգրիս, Փոքր Զաք, Դիալա գետերի և Սուլեյմանիի լեռների կազմած քառանկյան տարածքում<sup>3</sup>: Գիտնականների մի ուրիշ խումբ այն տեղադրում է Զագրոսյան լեռներում առանց կոմկրետացման<sup>4</sup>: Չորրորդ տեսակետի համաձայն, կուտիների երկիրը պետք է գտնված լինի Զագրոսի հյուսիսում, Ուրմիո լճի ավազանում, երբեմն ընդգրկելով նաև Կորդվաց լեռները<sup>5</sup>:

<sup>1</sup> Ա.Շտրեց, Հայաստան, Քրդստան և Արևմտյան Պարսկաստան բարելական-ասորեստանեայ սեպագրերու համաձայն (թարգմ. Յ.Բ. Թիլեգիկնեան), Վիեննա, 1904, էջ 52; Ռ.Մասպերո, Դревняя история народов Востока, М., 1911, с. 156; Տես նաև Ի.Մ.Դյակոն, История Мидии, М.-Л., 1956, էջ 104-ում նշված գրականությունը: Կուտիների երկիրը Վանա և Ուրմիո լճերի միջնատարածքում են տեղադրում Յ. Վինքրեց, Օրան հետեւով՝ նաև Գ. Խալաբրյանը ու Լեոն (Ռ.Վինկլեր, Западная Азия в древние времена (История человечества, т. III), Пет., 1903, с. 12; Ռ.Ա. Խալաբրյան, Очеркъ истории Армении, М., 1910, с. 35-39; Լեռ, Երկերի ժողովածու, հ.1, Ե, 1966, էջ 176-177): Առանց նշելու իր տեղեկության աղբյուրը, Ա. Պարիբյանը «Հայ ժողովրդի պատմության սկզբնավորման շրջանը» հոդվածում գրում է. «Գիտության մեջ հավանական է համարվում, որ Գուրիումի անունը պահպանվել է «Խույթ» կամ «Խոյթ» երկրանակի վրա...» («Տեղեկագիր», 1946, թիվ 9, էջ 14):

<sup>2</sup> Անվան վերջին -ում նաև նիկը աքադերենի ուղղական հոլովի ցուցիչն է, բուն երկրանունն է Կուտի կամ Գուտի:

<sup>3</sup> Ի.Մ.Դյակոն, История Мидии, էջ 104-ի համապատասխան հղումները:

<sup>4</sup> Տես օրինակ՝ Ռ.Ա. Մելիքինիվալի, Խարի-Յարտу, Ել., 1954, ս. 118-120; J.Bottéro, "The First Semitic Empire", The Near East: The Early Civilizations, London, 1967, p. 99; The Encyclopedia of Ancient Civilizations, London, 1980, p. 30:

<sup>5</sup> Ի.Մ.Դյակոն, ԱԲԻՒ, 1, դրույթ 4; H.R.Hall, The Ancient History of the Near East, Л., 1952, p. 186; Ի.Ճանև, Իстория Мидии, 1, Баку, 1960, с. 64, դրույթ 8 (տես նաև քարտեզը) և այլն:

Առկա փաստերի համապարփակ քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ այդ տեսակետներից ոչ մեկն էլ լիովին ծիշտ չի ներկայացնում իրականությունը: Եվ մեր նպատակն է այս գրքույկում, ելնելով գրավոր տեղեկությունների համակողմանի ուսումնասիրությունից, ցույց տալ թե՝ որտեղից եկան կուտիմները, ինչ բան է կուտիական գերիշխանությունը և որ երկրի պատմության մեջ պետք է դիտարկել ուշագրավ այս դարաշրջանը:

Գրքույկի ընձեռած սեղմ հնարավորությունները բույլ չեն տալիս ներկայացնելու մեր խնդրին վերաբերող բնագրերի թարգմանությունն ամբողջությամբ, ինչը կարևոր նպաստ կլիներ Հայաստանում հինարևելագիտության զարգացմանը: Տեղի սղության պատճառով չենք վկայակոչի նաև արծարծվող հարցերին վերաբերող ողջ գրականությունը, այլ կրավարարվենք միայն ամենաանհրաժեշտը նշելով: Կուտիական աշխարհակալության մասին ծավալուն մի ուսումնասիրություն, բնագրերի հայերեն թարգմանությամբ, ընթերցողի դատին կիանձնենք առաջիկայում:

## ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ներկա աշխատանքում խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմությունը կքննենք միայն գրավոր աղբյուրների հաղորդումներից ելնելով առանց անդրադառնալու հնագիտական նյութին (ինչն առանձին ուսումնասիրության առարկա է): Քննարկման ենթակա գրավոր նյութը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի: Առաջինը արքայական արձանագրություններն են՝ կանգնեցված դեպքերի կատարման ժամանակաշրջանում, երկրորդ խումբը՝ կազմում են հին բնագրերի պատճենները կամ դրանց հիմամբ ստեղծված պատմական երկերը: Երրորդ խմբի մեջ մտնում են պատմա-էպիկական բնույթի ստեղծագործությունները, որոնք թեպետ գրի են առնվել պատմվող իրադարձություններից դարեր հետո, այդուհանդերձ մեծարժեք պատմական սկզբնաղբյուրներ են: Կուտիական աշխարհակալության և նախորդ դարաշրջանի պատմության առաջին խմբին պատկանող սկզբնաղբյուրներն են աքաղական և կուտիական արքաների ու նրանց ձոնված արձանագրությունները<sup>6</sup>, Միջագետքի կուտիական

<sup>6</sup>RISA, p. 108-151, 170-1, 300-1; IRS, p. 97-113, 122, 128-9; IKA, S. 34-82:

դարաշրջանի հայտնի կառավարիչ Գուղեայի<sup>7</sup> և Ուրուկի արքա Ութուխեգալի<sup>8</sup> բնագրերը: Երկրորդ խմբի սկզբնադրյուրներից առանձնապես կարևորվում է «Շումերական արքայացանկը»<sup>9</sup>: Պատմա-վիպական բնույթի երկերից առանձնակի ուշադրության են արժանի Նարամ-Սուլենի մասին պատմող «Քուրայի արքայի լեգենդը»<sup>10</sup>, «Աքադի նզովումը» վիպասքը<sup>11</sup> և «Նարամ-Սուլեն ու իր թշնամիները» խեթական բնագիրը<sup>12</sup>: Սրանցից բացի կարևոր նշանակություն ունեն մի շարք տնտեսական բնույթի վավերագրեր, որոնք վերաբերում են կուտիական արքաներին տրվող հարկերին<sup>13</sup>:

Սրանցից բացի մեր խնդրի լուծմանն օգնում են հետագա դարաշրջանների մի շարք արձանագրություններ, որոնք կիշատակվեն յուրաքանչյուրն իր տեղում<sup>14</sup>:

7. RISA, p. 180-269; ANET, p. 268-9; Գուղեայի բնագրերի հանգամանալի ուսումնասիրությունը՝ համապատասխան գրականության հյումանթ, տես A. Falkenstein, *Dielnschriften Gudeas von Lagas*, I, Roma, 1966:

8 IRSA, p. 130-2; S.N.Kramer, *The Sumerians*, Chicago, 1963, p. 325-6:

9 Բնագիրը և հանգամանալի ուսումնասիրությունը տես Th. Jacobson, *The Sumerian King List ("Assyriological Studies", 11)*, Chicago, 1939:

10 O.R.Gurney, *The Sultantepe Tablets: IV. The Cuthaean Legend of Naram-Sin*, "Anatolian Studies", 1955, vol. V, p 93-113:

11 ANET, p. 646-651; P. Attinger, *Remarques a propos de la «Malediction d'Accad»*, RA, 1984, vol. 78, p. 99-121.

12 B.Hrozny, *Naram-sin et ses ennemis d'apres un texte Hittite*, "Archiv Orientalni", 1929, vol. 1, p. 65-76.

13 Шилейко В.К. Вотивные надписи шумерийских правителей, Гг., 1915, с. XXXII; А.И.Тюменев, Государственное хозяйство древнего Шумера, М-Л, 1956, с. 210-211 (նաև հղվող գրականությունը):

14 Կուտիաների եւ նրանց երկրի մասին թ.ա. 3-1-ին հազարամյակների բոլոր հիմնական հիշատակությունները համապատասխան գրականության ցուցումով ի մի են բերված Hallo W.W., Gutium (Qutium), *Reallexikon der Assyriologie und vorderasiatischen Archäologie*, Bd. 3, Berlin-New York, 1957-1971, S. 708-720-ուն:

Բավական բարդ և խճողված է մեզ հետաքրքրող իրադարձությունների ժամանակագրության խնդիրը: Մասնագիտական գրականության մեջ այսօր կիրառվում են ժամանակագրական մի քանի համակարգեր, որոնք իրարից տարբերվում են երբեմն հարյուրամյակներով: Մեր խնդիրց դուրս համարելով դրանց ճշգրտության քննությունը սույն աշխատանքում կառաջնորդվենք այդ համակարգերից մեկով<sup>15</sup>, առանց բացառելու մյուսների կիրառման հնարավորությունը:

Կուտիական տիրակալների գահակալման և աշխարհակալության ընդիանուր տևողության մասին հինմիջագետքան բնագերում պահպանվել են երեք միջյանցից տարբերվող տեղեկություններ.

ա) 21 արքաներ կառավարել են 125 (տարբերակ՝ 124) տարի և 40 օր,

բ) 23 արքաներ կառավարել են 99 տարի,

գ) 21 արքաներ կառավարել են 91 տարի և 40 օր<sup>16</sup>:

Գրքույկում մեր գործածած ժամանակագրական համակարգի հիմքում ընդունված է երրորդ տարբերակը: 91 տարին աշխարհակալության երկրորդ և երրորդ փուլերի տևողությունն է, իսկ դրան նախորդած 8 կամ 34 տարիները, թերևս, պետք է վերագրել առաջին փուլին, գուցե նաև դրան նախորդող ժամանակներին<sup>17</sup>: Եթե կուտիական տիրապետության ավարտի տարին թ.ա 2109 թվականն է, ապա սկիզբը կարելի է դնել թ.ա. 2234 կամ 2208 թվին, թեպես մեզ համար անհայտ է մնում, թե ինչ դեպքերի հետ կարող են կապվել այդ թվերը:

Նախքան մեր հիմնական խնդիրին կուտիական աշխարհակալության մեկնակետի տեղորոշմանն անցնելը հաջորդ բաժնում համառոտակի կներկայացնենք բուն նյութին նախորդած իրադարձությունները, ինչը թույլ կտա երևույթները դիտարկել պատճառահետևանքային փոխկապակցվածության մեջ և ճիշտ գնահատել դարաշրջանի պատմական նշանակությունը:

15 Է.Բիկերման, Հրոնոլոգия древнего мира, М., 1976, с. 179-181, հմմտ. ИДВ, с. 486-488:

16 Hallo W.W. Աշխ. աշխ., էջ 711:

17 Աշխարհակալության ծևափորման փուլերի մասին տես «Աշխարհակալության տարածքային ընդգրկումը» բաժնում:

Քրիստոսի ծննդից շորջ երեք հազար տարի առաջ Միջագետքի հարավում՝ Շումերում, կազմավորվել էին քաղաք-պետություններ, որոնք ճանաչում էին Նիպուր սրբազան քաղաքի հոգևոր առաջնությունը (Վերջինս շումերների գերագույն աստծո՝ Ենլիլի պաշտամունքի կենտրոնն էր): Գործում էր մի տեսակ «հոգևոր համադաշնակցություն»: Այդ քաղաքների միջև ժամանակ առ ժամանակ հանուն քաղաքական ու տնտեսական առաջնության սանձագերծվում էին պատերազմներ. որոնց արդյունքում որևէ քաղաք-պետություն դառնում էր գերիշխող: Բ.ա. 24-րդ դարի երկրորդ կեսին շումերական քաղաքները միավորվել էին Լուգալգիդեսի արքայի իշխանության ներքո: Նշված ժամանակշրջանում Միջագետք էին ներթափանցել որոշ սեմական ցեղեր, որոնց ներկայացուցիչները զանազան ցածր ծառայությունների անցնելով շումերական քաղաքներում ձեգտում էին տիրանալ տեղերի իշխանությանը: Նման ճանապարհով թիշ քաղաքում իշխանությունը զավթեց սեմացեղ այգեպան-մատովվակը, որը գահ բարձրանալով՝ իրեն կոչեց Շարրում-ցեն (Սարգոն) «իշրավի արքա»: Նաև ածվելով ու փախուստի մատնվելով Լուգալգիդեսի արքայից նա հաստատվեց մինչ այդ աննշան Աքադ քաղաքում (Շումերից հյուսիս), վերափոխեց զորքը՝ ստեղծելով պատմությանը հայտնի առաջին մշտական բանակը (բաղկացած 5400 զինվորից) և պատերազմ սկսեց շումերական քաղաքների դեմ:

Կուտիական և դրան նախորդած աքադական աշխարհակալությունների վերաբերյալ կա հսկայածավալ գրականություն: Մենք առանց հիրումների կշարադրենք նշված դարաշրջանների պատմությունը: Առավել մանրանասն ծանոթանալու համար ընթերցողը կարող է օգտվել վերը նշված սկզբնադրյուրներից, և ստորև նշվող գրքերից և նրանցում հղված գրականությունից: Ճյակոնով Ի.Մ., Общественный и государственный строй древнего Ассирии. Шумер, М., 1959, с. 196-248; J.Bottéro, "The First Semitic Empire", p. 91-132; C.J.Gadd, "The Dynasty of Agade and the Gutian Invasion", The Cambridge Ancient History, vol. I, part 2A, Cambridge, 1980, p. 417-463. ԱՃ. և 233-267.

Շուրջ տասը տարի տևած պատերազմի ընթացքում Սարգոն Աքաղյին, տալով 34 ճակատամարտ, նվաճում է Շումերն ու կենտրոնական Միջագետքը ստեղծելով նախադեպը չունեցող մի աշխարհակալություն, պատմությանը հայտնի առաջին բռնապետությունը: Դրանից հետո նա ձեռնամուխ է լինում հեռավոր արշավանքների կազմակերպմանը, որոնց շնորհիվ դառնում է ինձ Առաջավոր Ասիայի մեծ մասի գերիշխանը: Նրա տիրակալության տարիներին (թ.ա. 2316-2261 թթ) նվաճված երկրներում ծագեցին ապստամբություններ, որոնք ճնշվում էին չտեսնված վայրագությամբ. թերևս դա է պատճառը, որ «Սարգոնյան ժամանակաշրջան» մեջ նրա վախճանը համարվում է սրբապղծության արդյունք<sup>18</sup>: Ապստամբությունների ու դրանց ճնշման մքնոլորտում անցան նաև Սարգոնին հաջորդած նրա երկու որդիների՝ Ոհմուշի և Մանիշտուշուի գահակալության տարիները (թ.ա. 2260-2237 թթ). նրանք երկուսն էլ սպանվեցին պալատական խորվությունների բոհութում: Իրավիճակը պատկերացնելու համար բավական է նշել, որ Ոհմուշը միայն մեկ ապստամբության ճնշման ժամանակ ավերեց շումերական իինգ քաղաք, որոնցից երկուսում սպանվեցին մոտ 9 հազար, կախաղան հանվեցին 3600 և գերվեցին շուրջ 20 հազար շումերներ: Դությունը չլավացավ նաև Աքաղի չորրորդ տիրակալ Նարամ-Սուլեմի օրոք, որին հաջողվեց վերականգնել սարգոնյան տերության իր նախորդների օրոք անկում ապրած հզորությունը:

Նարամ-Սուլեմի առաջին գործերից մեկը եղավ Շումերում ծագած նոր ապստամբությունների ճնշումը, որի համար հարկ եղավ կազմակերպել ինն արշավանք: Այնուիեւ նա Եփրատի հոսանքն ի վեր ձեռնարկեց մի քանի ռազմաերթ, որոնց արդյունքում ի վերջո կարողացավ նվաճել Եբլա և Արման երկրները մինչև Մայրիների (Ամանոսի) և Արծարի (Շայկական Տավրոսի) լեռները: Թերևս այս արշավանքների հիշողությունն է պահպանվել խեթական «Նարամ-Սուլեմն ու իր թշնամիները» անվամբ հայտնի բնագրում, որը պատմում է Աքաղի տիրակալի դեմ դուրս եկած 17 դաշնա-

<sup>18</sup> ANET, p. 266.

կից Երկրների (այդ թվում Արմանիի)<sup>19</sup> մասին:

Նարամ-Սուտենի դեմ դաշնակցած 17 Երկրների մասին է պատմում “Զուլքայի արքայի լեզենդը”, որի համաձայն, մինչև հաջողության հասնելը նա դաշնակից գործերի դեմ է ուղարկում Երեք բանակ (120 հազար, 90 հազար և 60700 զինվորներով), որոնցից ոչ մի կենդանի շումչ չի վերադառնում: Այդուհանդերձ Նարամ-Սուտենին հաջողվում է նվաճել դաշինքի մեջ մտնող Արման Երկիրը, որի մասին է վկայում նաև նրա Դիարբեքիրի շըրջանից գտնված արձանագրությունը:

Այնուհետև Նարամ-Սուտենը արշավագներ է ձեռնարկում Տիգրիսի հովտով դեպի հյուսիս և հյուսիս-արևելք՝ հասնում մինչև Մեծ Եւ Փոքր Զար գետերի միջնատարածք: Այդ մասին վկայող բնագրերից Երկուսում հիշատակվում է Արամ թագավորությունը<sup>20</sup>, որն իր տարածքով ու անվամբ կարող է համապատասխանել ք.ա. 19-րդ դարում հիշվող Սիմեսյան Արմանիին<sup>21</sup> և Վանի թագավորության (Ուրարտու) արքունական Արամալի (Արմարիլի) Երկրի<sup>22</sup> հարավակողմին<sup>23</sup>:

<sup>19</sup> B. Hrozný, նույն տեղում: Դաշնակից 17 Երկրները տարածված են Եղել Փոքր Ասիայի կենտրոնից մինչև Ուրմիո լճի ափազանի հարավային շրջանը, իսկ Արմանին գտնվել է Արևմտյան Տիգրիսի սննան տարածաշրջանում (Ա. Սովսիսեան, Արմանի-Արմի Երկիրն ըստ արադական և էլեայական աղբյունների, «Հայկացեան հայագիտական հանդես», ժԳ հաստոք, ՊԵՐ, 1993, էջ113-127; հոդվածում նշված գրականությունից բացի Արմանի (Երկրի հայատանյան տեղադրության մասին տես Վ. Մատթեոսեան, Մելպագիր աղբյուններու Արման Երկիրը, ՀԱ, 1994, էջ 255-268):

<sup>20</sup> I.J.Gelb, Materials for the Assyrian Dictionary, I, Chicago, 1952, p. 110-112; F.Thureau-Dangin, Une inscription de Narâm-Sin, RA, 1911, 8, 4, p. 199-200: Առաջին արձանագրության մեջ Արամ Երկիրը հիշվում է Սիմուրրումի, Երկրորդում Ամ Երկրի և Տիգրա լեռների հետ: Երկրորդ արձանագրության համար առաջարկված է վերծանւթյան մի տարբերակ ևս, որի համաձայն նրանում չեն ընթերցվում Արամ և Ամ Երկրանունները (տես IRSIA, p. 108-109):

<sup>21</sup> Սիմեսյան Արմանիի տեղադրությունը տես Ա. Սովսիսյան, նշվ. աշխ., էջ 121-122:

<sup>22</sup> Արամալի/Արմարիլի Երկրի տեղորոշումը տես ԴՅ, էջ 30-31, 38-39:

<sup>23</sup> Այս տեղորոշումն առաջարկելով հանդերձ, հնարավոր ենք համարում Արամի տեղադրությունը Ուրմիո լճի հարավում՝ այն կապելով Մանա Երկրի Արմահո (Արմեղ, Ուրմեյատե) քաղաքի հետ: Քաղաքի տեղադրությունը ԴՅ, էջ 37-38:

Իբրև այս արշավանքների բնական հետևանք Նարամ-Սուլենի դեմ, ըստ երևույթին, կազմավորվում է նոր դաշինք, որի գլուխ էր կանգնած կուտի-ների երկիրը (Վերջինս մտնում էր նախորդ 17 երկրների դաշինքի մեջ և գերծ էր մնացել Նարամ-Սուլենի ավերածություններից): Կուտիական վտանգն այնքան շոշափելի էր, որ Աքաղի տիրակալը դեպի Էլամ (Իրանի հարավ արևմուտքում) կատարած արշավանքի ժամանակ ոչ թե ավերածություններ գործեց, այլ Էլամի արքայի հետ կնքեց հաշտության ու փոխօգնության պայմանագիր<sup>24</sup>, ստեղծելով մի տեսակ հակակուտիական միություն: Սակայն դա ևս չէր փրկելու Նարամ-Սուլենին կործանումից, որի եւ արտաքին, եւ ներքին քաղաքականությունը շատ ամպեր էին կուտակել նրա գլխին: Իր իշխանության հենց սկզբից նա մեծ հարված էր հասցրել միջագետքան բնիկ իշխանատուհներին և քրմությանը առաջին ներին գրկելով տոհմական տիրույթներից, իսկ քրմական կարևորագույն պաշտոններում իր մերձավորներին նշանակելով: Վերջին միջոցառման շնորհիվ էլ ինարավոր դարձավ միջագետքան իրականության մեջ նախադեպը չունեցած մի սրբապղծություն. Նարամ-Սուլենն իրեն հոչակեց “աստված” կործանելով գերագույն աստծո տաճարը և հաստատելով իր անձի պաշտամունքը:

Դա առաջ բերեց նոր ընդվզում, որի ճնշման նպատակով փառամոլ բռնակալը գրոհեց շումերների սրբազան Նիպպուր քաղաքի վրա: Ըստ «Աքաղի նզովումը» վեպի, սրբապղծությունից զայրացած մեծ աստվածները նզովեցին Աքաղը, իսկ գերագույն աստված Ենլիլը (որի պաշտամունքի կենտրոնը Նիպպուրն էր) լեռներից Աքաղի դեմ ուղարկեց կուտի-ների մեծաթիվ զորքերը: Այս տողերում պետք է տեսնել շումերական քրմության դիմումով կուտիական զորքերի օգնություն գալու պատմության վիպականացումն ու դիցաբանական գունավորումը: Եվ օգնությունը չուշացավ. սրընթաց գրոհով Միջագետքի կենտրոն արշավեցին լեռնական կուտիները, որոնց դեմ պատերազմում ինքնակոչ «աստվածը» սպանվեց:

24 Վ.Խինչ, Շօսություն Շամ, Մ., 1977, ս. 73-75:

Կուտիների առաջնորդ Ենրիդավիզիրը Աքաղի հարևանությամբ գտնվող Սիպպար քաղաքում (որն արևի պաշտամունքի կենտրոնն է) կանգնեցրեց մի արձանագրություն, որում ներկայանում է պարտված Նարամ-Սուլենից նվաճած «աշխարհի չորս կողմերի քագավոր» տիտղոսով:

Նարամ-Սուլենի որդի Շարկալիշարիխն (թ.ա. 2200-2176 թթ) հաջողվում է վերատիրանալ հոր գահին, սակայն նրա իշխանությունը տարածվում էր միայն Աքաղի և Շումերի վրա: Նա այլևս չեր կրում «աշխարհի չորս կողմերի արքա» տիտղոսը, նրանից մեզ չեն հասել իր հաղթական արշավանքների մասին արձանագրություններ: Աքաղին հյուսիսից սահմանակից է դառնում կուտիական տերությունը, որի հետ նա ունենում է ռազմական բախումներ: Շարկալիշարիխ մահից հետո կուտիներին հաջողվում է տիրանալ Աքաղին ու Շումերին և իրենց աշխարհակալության սահմանը հասցնել Պարսից ժողի ջրերին: Քիչ-անց կուտիական գերիշխանությունը տարածվում է նաև Էլամի վրա, որի տիրակալները Նարամ-Սուլենի ու նրա որդու դաշնակիցներն էին և պատերազմել էին ընդդեմ կուտիների: Այդ դեպքերից հետո շուրջ յոթ տասնամյակ շարունակվում է կուտիական գերիշխանությունը Առաջավոր Ասիայի մեջ մասի վրա, որի ընդհանուր բնութագիրը կներկայացնենք հետագա շարադրանքում:

Կուտիների կառավարման վերջում տեղի ունեցավ լուսնի խավարում, որը քրմերի կողմից մեկնվեց որպես նրանց գերիշխանության ավարտի երկնային նախանշան: Ուշագրավ է, որ Ուրուկ քաղաքում Շումերի քագավորությունը վերականգնելու դրոշը պարզած Ուբուխեգալի գործերի հետ ռազմական մեկ բախումից հետո կուտիները հետ քաշվեցին իրենց լեռները՝ չփորձելով արյան մեջ խեղդել անկախության համար ոտքի կանգնածների շարժումը: Սա թերևս համաշխարհային պատմության այն հազվադեպ դրվագներից է, երբ ազատագրական առաքելություն կատարողը գալով իշխանության չի վերածվում բռնակալի:

## ԿՈՒՏԻԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԿԵՏԸ

Նախքան կուտիական աշխարհակալության բնութագրմանն անցնելը անհրաժեշտ է պարզել նրա ծավալման մեկնակետը, այսինքն՝ թե որտեղ էր գտնվում բուն կուտիական երկիրը, մի հարց, որի պարզաբանումը թույլ կտա ասել, թե իբրև որ երկրի պատմության մաս պետք է այն դիտարկել: Նախաբանում ասվեց, որ այս հարցի շուրջ հայտնվել են տարբեր կարծիքներ: Մենք առանց դրանցից որևէ մեկին նախապատվություն տալու կը նենք կուտիների երկրի մասին եղած այն գրավոր հաղորդումները, որոնք կարող են որոշակիություն մտցնել տեղորոշման խնդրում:

Դնագույն բնագրերից մի քանիսը կուտիումը ներկայացնում են հեռավոր երկրների թվարկումներում, ինչը բավարար հիմք չի տալիս ճշգրիտ տեղորոշման համար: Որոշ հիմքեր կան ենթադրելու, որ Նարամ-Սուլենի դեմ հայտնի արշավանքից առաջ կուտիներն արդեն հաստատվել են խաբուր գետի հովտում և Եփրատի միջին հոսանքի շղանում<sup>25</sup>: Նշված տարածքը, սակայն, լեռնային չէ և այն կարող էր լինել աշխարհակալության ծավալման առաջին փուլի արտահայտություն: իսկ ո՞րն է այն լեռնային երկիրը, որտեղից նրանք կարող էին մուտք գործել նշված տարածք: Կուտիների տիրապետության ավարտի մասին պատմող բնագրի քննությունը ցույց է տալիս, որ Ուրուխեգալի գործի հետ ընդհարուելուց հետո նրանք Միջագետքի հարավից իրենց երկիր էին նահանջում գնալով դեպի հյուսիս<sup>26</sup>: Այս տեղեկությունը կողմնորոշ, բայց բացարձակ տեղադրության համար անբավարար է:

Կուտիների երկրի ճշգրիտ տեղորոշման համար մեծ արժեք ունեն Ք.ա. 14-13-րդ դարերի ասորեստանյան արձանագրությունները: Ասորեստանի արքա Արտամերարի Ա-ն (Ք.ա. 14-րդ դար), փառաբանելով իր հայր Արքի-դեմիլու արքային, թվարկում է նրա կատարած նվաճումները Թուրուկի

<sup>25</sup> H.Sauren, Der Feldzug Utu-hengals von Uruk gegen Tirikan und das Siedlungsgebiet der Gutäer, RA, 1967, LXI,1, p. 75-79; Hallo W.W., նշվ. էջ 719; հմտ. ԱՃԲ, էջ 77:

<sup>26</sup> H.Sauren, նույն տեղում, քարտեզը էջ 77:

Երկիրը, կուտիմերի Երկիրը (բնագրում կուտիական լեռների բոլոր տիրակալներին), կուտմուխի Երկիրն ու նրա բոլոր դաշնակիցներին<sup>27</sup>:

Կուտմուխին (Կադմուխին) հայկական Կադմեա տունն է և գտնվել է Արևմտյան Տիգրիսի ու Բուն (միացյալ) Տիգրիսի կազմած անկյունում<sup>28</sup>: Թուրուկին, մեր կարծիքով, իր անունն է թողել հայկական Թուրկունիս գյուղին, որը գտնվել է Վանի նահանգի հարավում Հաքյարի գավառում, Մեծ Զաք գետի աջակողմում<sup>29</sup>: Այսինքն կուտիմերի Երկիրը պետք է փնտրել Կադմեա տան և Հաքյարի գավառի միջև: Ասորեստանի մեկ այլ արքա Սալմանասար Ա-ն (Ք.ա. 1274-1245 թթ), արձանագրում է, որ իր դեմ ապստամբած կուտիմերի («որոնք անհաշիվ են, ինչպես աստղերն Երկընքում») տարածքները ձգվել են նույն Կադմուխից մինչև Ուրուատուի Երկրի սահմանը<sup>30</sup>: Թուկուլքի-Նինուրա Ա-ն (Ք.ա. 13-րդ դարի վերջ) իրեն փառաբանում է որպես «անհնազանդ ու կուլուանուցիներին (Կումանու Երկրի ժողովրդին) և բարինցիներին, Կադմուխի Երկրին ու կուտիմերի գործը դեկավարող չարագործներին ոչնչացնող»<sup>31</sup>:


<sup>27</sup> АВИИУ, 1: Նույն բնագրում ինքը Սահմաներարին ներկայանում է իբրև «կասիթ-ների, կուտիմերի, լուլումեների և շուբարեցիների հզոր ցեղերին (կամ զորքերին) ոչնչացնող»: Կասիթները Կաշու (Կասու) Երկրի բնակիչներն են, որոնք Ք.ա. 18-րդ դարում արշավանքներ կազմակերպեցին դեպի Բարելոն, իսկ 16-12-րդ դարերում գրադեցրին Բարելոնի գահը: Մեր կարծիքով Կաշուն կապում է Հայկական Տավրոսից հարավ, նրան զուգահեռ ձգվող Կաշիարի (-ի մասնիկը տեղանվանակարտ է) լեռների հետ: Լուլումեն նույն Լուլութե Երկիրն է Ուրմիո լճից հարավ, Ծուբարին (Ծուբրիան) գրադեցրել է Արևմտյան Տիգրիսի հովիտը: Այսինքն կուտիմերի Երկրը պետք է փնտրել Կաշիարի և Հայկական Տավրոս լեռների միջնատարածքից մինչև Ուրմիո լճից հարավ ընկած տարածության վրա:

<sup>28</sup> ТУ, с. 98-99:

<sup>29</sup>Թ.Խ. Հակոբյան, Ստ. Տելիք-Բախչյան, Յ. Խ. Բարսեղյան Հայաստանի և հայուակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Ե. 1988, էջ 499:

<sup>30</sup> АВИИУ, 2:

<sup>31</sup> АВИИУ, 5: Նույն արքայի այլ արձանագրություններում (ԱԲԻԻՍ, 3 և 7) տիտղոսաշարի մաս է կազմում «արքա շուբարեցիների, կուտիմերի և Նաիրի բոլոր Երկրների» արտահայտությունը, ինչը վկայում է կուտիմերի Երկրի Ծուբրիայից արևելք և Վանա լճից հարավ գտնվելու մասին



Կումանու (Կումենու) Երկիրը տեղադրվում է Արևելյան Խաքուրի հովտում<sup>32</sup>, իսկ Բարխին Տիգրիսի արևելյան ու արևմտյան ճյուղերի միացման շրջանի հյուսիսում<sup>33</sup>: Նոյն արքայի մեկ այլ արձանագրության մեջ մեզ հայտնի Երկրներից բացի Կուտիների հարևանությամբ հիշվում է Մեհրի (Մեհրի) Երկիրը, որը գտնվել է Տիգրիսի վտակ Արևյան Խաքուրի հովտում, Մեհրի-նար լեռան շրջանում<sup>34</sup>: Անփոփելով Ասորեստանի արքաների հաղորդումները, տեսնում ենք, որ Կուտիների Երկիրը պետք է փնտրել Կադմուխի, Բարխի, Կումենուի, Ուլուստիքի, Թուրուկի և Մեհրիի հարևանությամբ: Իսկ այդ Երկրները քարտեզի վրա շրջան են կազմում, որի կենտրոնը ճիշտ և ճիշտ համընկնում է Մեծ Հայքի Կորդվաց աշխարհ (Կործայք) նահանգի Կորդուք գավառին: Կորդուքի և Կուտիների կապի օգտին է խոսում նաև այն փաստը, որ արամեական աղբյուրներում Կորդվաց լեռները կոչվում են Կուտի (որից էլ արաբականում Զուդի)<sup>35</sup>:

32 ԴՅ, շ. 119-120:

33 ԴՅ, շ. 50-51:

34 Ա. Աղոնց, Հայաստանի պատմություն, Ե, 1972, էջ 69: հնմտ. ԴՅ, շ. 143-144:

35 Ա. Կատվայան, Կորդուք, Հայկական սովետական հանդագիտարան, հ.5, Ե. 1979, էջ 645.

Սակայն որքան էլ ռազմունակ լիներ կորդուը գավառը (կամ թեկուց Կորդվաց աշխարհ նահանգը), անհավանական է, որ միայնակ կարողանար դուրս բերել այնպիսի զինուժ, որով պարտության նատներ Առաջավոր Ասիայի մեծ մասը ծնկի բերած և նվաճված երկրների ռազմական ուժերը ներառած աքաղական բանակը, դեռ շուրջ մենք դար էլ գերիշխեր Առաջավոր Ասիայում: (Մանավանդ, որ հակառակորդ կողմների սպառագինության մեջ որակական տարբերություն չկար և պատերազմում եական նշանակություն պետք է ունենար զինվորների քանակը):

Ուրեմն, ո՞րն է գաղտնիքը:

«Քութայի արքայի լեգենդը», ինչպես ասվեց, պատմում է Նարամ-Սուլեմի դեմ դուրս եկած 17 երկրների դաշինքի ճամփան, որի մեջ էր մտնում նաև Կուտիտումը և որի գլուխ կանգնած էր Էւլութքումի Անուբանինի արքան<sup>36</sup>: Նարամ-Սուլեմի հյուսիսային արշավանքներն ուղղված էին այդ դաշինքի դեմ, որի երկրներից մի քանիսն աքաղցի բռնապնդի համար մնացին անհասանելի: Դրանց թվում էր նաև Կուտիտումը, ուզ և, դատելով փաստերից, տեղափոխվել էր հակասեմական դաշնակցության կենտրոնը<sup>37</sup>: Կուտիտուրի առաջնորդությամբ մարտնչող գործը պետք է ննրառած լիներ Յայկական լեռնաշխարհի և ճրանից արևելք ու արևմուտք ընկած երկրների դաշնակից բանակները, որոնց հաճատեղ ուժերով էլ հնարավոր դարձավ հաղթանակն Աքաղի նկատմամբ: Դաշնակից ուժերը կոչվեցին դաշինքի առաջնորդների անվամբ: Մեր այս եզրահանգույն հաստատվում է թ.ա. 1-ին հազարամյակի բնագրերով ևս: թ.ա. 714 թ. Վանի թագավորության (Ուրարտու) դեմ Ասորեստանի արքա Սարգոն Բ-ի արշավանքի մասին պատմող արձանագրության հատվածներից մեկում ներկայացվում է ռազմերից առաջ վերջինիս ելքը կանխագուշակող մարգարերերունը:

36 Նրա հաղթական արձանագրությունը ու պատմեառաքեալք ատնվել են Ժամակակից Զոհար քաղաքի շրջանում (RISA, թ. 150-1, IRSIA, լ. 168)

37 Միջագետքյան բնագրերը հաղորդում են Էւլութքում արքա Սարունիի նկատմամբ Նարամ-Սուլեմի տարած հաղթանակի մասին Սաթունին հաշվառքար, Անուբանինի հաջորդն է:

Գուշակությունների ու մարգարեսությունների ժամանակ երկրները կոչ վկան էին ոչ թե իրենց ժամանակակից, այլ հնում ունեցած անուններով։ Եվ Ուրարտուն տվյալ բնագրի գուշակության մասում կոչվում է Գուտիում<sup>38</sup>։ Այսինքն թ.ա. I հազարամյակի Ուրարտուն համապատասխանում է Միջադետքին ջաջածանոթ թ.ա. III հազարամյակի Կուտիումին։

Նույն թ.ա. 8-րդ դարի ավելի վաղ՝ Սալմանասար 4-րդի ժամանակ (թ.ա. 781-772) գրված մի արձանագրության մեջ կանի բագավորությունն ուղղակի կոչվում է «կուտինների երկիր»<sup>39</sup>.

Վերոշարադրյալ ողջ քննությունը հաճախեցնում է մի եզրահանգման. կուտիական աշխարհակալության մելքնակետոր Յայկանան լեռնաշխարհի հարավն է, այն ստեղծվել է հնագույն Յայաստանի (զուցե նաև հարեան երկրամասների) դաշնակից գորբերի ջանքերով, ուստի և պետք է դիտարկի իրեւ մեր երկիր ու ժողովրդի հնագույն պատմության բաղկացուցիչ մի մաս։ Թերևս այդ ժամանակներից եկող ավանդությամբ է պայմանագրված Աստվածաշնչի թարգմանություններում Յայաստանի Կորդու անվան տարրերակներով (Կարդու, Քարդու, Քարդա) հանդես գալը (ինչպես որ Ուրարտուն է կոչվում Կուտիում)...

## ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

Կուտիական աշխարհակալությունն ունեցավ ձևավորման երեք փուլ։ Առաջինում կուտիները, շարժվելով Յայաստանի հարավից, հաստատվել էին Խաբուր գետի հովտում և Եփրատի միջին հոսանքի շրջանում։ Այս փուլը ժամանակագրորեն համընկնում է Նարամ-Սուտենի իշխանության վերջին տարիների հետ։ Երկրորդ փուլը սկսում է Էնրիդավիգիրի արշավանքով Նարամ-Սուտենի տապալմամբ, և տեսում մինչև Շարկարլիշարիի մահը։ Այդ փուլում աքաղական տերությունը սահմանափակվեց Աքադի և

38. ԱԲԻԱ, 49 (318), դրու. 79:

39. ԱԲԻԱ, 33.

Շումերի սահմաններում, իսկ կուտիների գերիշխանության հարավային գիծը հասավ Աքաղի տերության կյուսիսին: Այս փուլում հակառակորդ կողմերի միջև տեղի են ունենում մի շարք բախումներ, որոնք վճռորոշ նշանակություն չեն ունենում: Երրորդ փուլում Շարկարլիշարիի մահից հետո, կուտիները տիրանում են Շումերին և Աքաղին: Քիչ անց նրանք նվաճում են Էլամը և մինչև աշխարհակալության ավարտը (շուրջ 7 տասնամյակ) տիրում են Առաջավոր Ասիայի մեծ մասին:

Աշխարհակալության տարածքային ընդգրկման մասին պատկերացում են տալիս կուտիական դարաշրջանի Միջագետքի ամենահայտնի կառավարիչ Գուղեայի արձանագրությունները<sup>40</sup>: Դրանցում թվարկվում են այն երկրները, որոնցից նա զանազան շինանյութեր (այդ թվում թանկարժեք մետաղներ ու քարեր) է բերել տաճարաշինության նպատակով: Գուղեան ազատ տեղաշարժվում էր Առաջավոր Ասիայի մեծ մասում. հասկանալիորեն, այդ երկրները պետք է գտնվեին կուտիների տերության մեջ (կամ ազդեցության ոլորտում), որոնց աջակցությունն էր վայելում Միջագետքի կառավարիչը:

Նշված արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխարհակալության արևելյան սահմանները ներառել են Էլամը, իսկ արևմտյանը՝ Ամանոսի (Սայրիների) լեռները: Տերության մեջ ընդգրկված են եղել ողջ Միջագետքը Տիգրիսի արևելակողմյան ու Եփրատից արևմուտք ընկած տարածքներով: Հարավում սահմանը հասել է Պարսից ծոց: Գուղեան շինանյութեր է բերում նաև անդրծովյան Թիլմուն<sup>41</sup>: Մագան և Մելուխա երկրներից<sup>42</sup>: Դժվար է ասել նրանց հետ կապը եղել է առևտրական, թե այլ բնույթի:

40 Արձանագրություններում հիշվող երկրների աշխարհագրությունն ըստ տարածաշրջանների տես A.Falkenstein, Եշվ. աշխ., էջ 46-54 (գրքում թերվող մի քանի տեղորոշումներ այսօր ընդունելի չեն):

41 Թիլմուն երկրի Վերաբերյալ միջագետքյան աղբյուրներն ունեն երկու կարգի հաղորդում. մեկը, որ այն դրախտն է, մյուսի համաձայն, դա սովորական մի երկիր է Բահրեյնյան կղզիներում տեղորոշվող: Ղիշաբանական բնագրերի դրախտ-թիլմունը գտնվել է Հայկական լեռնաշխարհում (տես մեր «Շումերական դրախտի առեղծվածք» հոդվածը «Գարուն», 1996, թիվ 3-ում): Այստեղ խոսքը Բահրեյնի մասին է:

42 Մագանը հավանաբար գտնվել է ներկայիս Օման երկրի տարածքում, Մելուխան՝ Յնդկաստանում: Կան տեղորոշման այլ տեսակետներ ևս:



Դյուսիսում աշխարհակալությունը ներառել է Յայկական լեռնաշխարհի բավական մեծ մի հատվածը (Եթե ոչ ողջ լեռնաշխարհը): Գութեայի բնագրերը հիշատակում են Մենուա լեռները. որոնք վաղուց համարվել են Մանա Երկրի (Ուրմիո լճի ավազանի հարավում) և Դին Կտակարանի Միննի թագավորության հետ<sup>43</sup> (որն Աստվածաշնչի թարգմանություններում հանդես է գալիս «Արմենիա» անվամբ կամ որպես «Արարատյան թագավորություններից» մեկը): Իսկ Ա. Կիֆիշինը ուղղակի կապ է տեսնում լեռների և Վանի թագավորության արքա Մենուա Իշպուխնորդու անունների միջև<sup>44</sup>: Մենուա լեռների հետ հիշատակվում է Ումանում տեղանունը, որը կապվել է Արամ Երկրի հետ հանդես եկող Ամ Երկրի հետ<sup>45</sup>:

<sup>43</sup> Այս տեսակետը դեռ անցյալ դարում առաջ էր քաշել Հ. Յենսենը (տես Ս. Շտրեթ, նշվ. աշխ., էջ 105): Դետագայում՝ Ե. Թասունի, Նախահայկական Յայստան, «Պեյրուր», 1950, էջ 32; Ա. Կիֆիանի, Географические воззрения древних шумеров при Платоне Гудеа, «Палестинский сборник», вып. 13(76), Ленинград, 1965, с. 65-67:

<sup>44</sup> Ա. Կիֆիանի, նշվ. աշխ., էջ 66-67:

<sup>45</sup> Վերջին -անում բաղադրիչը դիտվում է իրեն վերջավորություն (Արամ-Արմանում, Ամ-Ումանում), տես I. J. Gelb, Inscriptions from Alishar and Vicinity, Chicago, 1935, թ. 6; Ա. Կիֆիանի, նույն տեղում: Արամ և Ամ Երկրներին վերաբերող արձանագրության մասին տես վերը (էջ 10):

Հայկական լեռնաշխարհին վերաբերող մյուս տարածքը Խախում լեռներն են, որտեղից բերվել է ոսկին: Ուսկու արդյունահաննան այս կարևոր կենտրոնը հիշվում է Ք.ա. 20-18-րդ դարերի փոքրասիական (Կամեշի) առևտրական բնագրերում<sup>46</sup>, Խախա անվամբ խեթական աղբյուրներում<sup>47</sup>, Խախի տարբերակով Վանի թագավորության արձանագրություններում, Խախն ձևով՝ Մովսես Խորենացու և Փավստոս Բյուզանդի մոտ<sup>48</sup>: Այն գտնվել է Սեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառում, որը հայտնի էր ոսկու արդյունահաննամբ:

Առաջին հիմնացքից տարօդինակ է թվում, որ Գուղեայի արձանագրությունները հիշատակում են Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան սահմանային Մենուա լեռները, իյուսիս-արևմուտքում գտնվող Խախ(ում)ը, բայց ոչինչ չեն հաղորդում Կուտիումի մասին: Սակայն դա խարուսիկ տպագրություն է. Գուղեայի բնագրերում հիշվում է Արատտա Երկիրը<sup>49</sup>, որը լավ հայտնի է շումերական ոյուցազնավեպից կապված Ք.ա. 28-27-րդ դարերի իրադարձությունների հետ, տեղադրվում է Հայկական լեռնաշխարհում<sup>50</sup> և այստեղ, փաստորեն, փոխարինում է Կուտիումին:

<sup>46</sup> P.Garelli, *Les Assyriens en Cappadoce*, Paris, 1963, p. 109-110; Ի.Բ. Յակովեկա, Կլիнописные тексты из Кюльтене в собраниях СССР, №., 1968, с. 120-122: Խախումից բացի Կամեշի (Բյուլ-թեփե հնավայր) բնագրերը հիշատակում են շուրջ Երկու տասնյակ արոյունաբերող և առևտրական կենտրոններ (Նիխիրիա, Թեզարանա, Շանուխա, Կատար, Կարանա, Էլուխութ, Շուբար/Շուբրիթում, Շուփանա և այլն): Զորսիազարանյա այս բնագրերը անգնահատելի սկզբանդրյուններ են Հայաստանի հնագույն պատմության համար և անհասկանալիորեն մինչ հիմա չեն գործածվել հայագիտության մեջ, չնայած տասնամյակներ առաջ հրապարակված լինելուն:

<sup>47</sup> Վ.Н. Խաչատրյան, Վուշտական պատմություններ, Ե., 1971.

<sup>48</sup> Տ. ս. 227-228, նաև հոված գրականությունը:

<sup>49</sup> A.Falkenstein, Եշվ. աշխ., էջ 50 (հեղինակը հետևում է Արատտայի իրանյան տեղադրության մի տեսակետի, որը քննադատության չի դիմանում):

<sup>50</sup> Արատտայի հայաստանյան տեղադրության հիմնավորումը տես Ա.Մովսիսյան, Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Ե., 1992, էջ 10-28; Վ.Սատրենեան, Սումերական աղբիւրներու Արատտա Երկիրը և Հայկական լեռնաշխարհը, ՀԱ, 1995, էջ 284-303:

Այս ուշագրավ հանգամանքը գալիս է մեկ անգամ ևս փաստելու Արատ-  
տայի և Կուտիումի մեր տեղորոշումների ճշմարտացիությունը, խոսում է  
հօգուտ նույն երկրի նկատմամբ կիրառված երկու անունների համարժե-  
քության և լրացնում Հայաստանի հնագույն պատմության բաց օդակնե-  
րից մեկը:

Ամփոփելով վերը ասվածը՝ տեսնում ենք, որ Ք.ա. 23-22-րդ դարերում  
Հայաստանից ծավալված կուտիական աշխարհակալությունն ունեցել է  
տարածքային հսկայական ընդգրկում Ամանոսի լեռներից ձգվելով մինչև  
Էլամ, Հայկական լեռնաշխարհի հյուսիսից մինչև Պարսից ծոց...

## ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Կուտիները Միջագետք մուտք գործեցին ոչ թե որպես նվաճողներ ու  
ստրկացնողներ, այլ օգնության եկող ազատարարներ: Նրանք տապալե-  
լով աքաղական բռնապետությունը և իրենց գերիշխանությունը տարածե-  
լով Առաջավոր Ասիայի մեջ մասի վրա ոչ միայն չստեղծեցին նմանատիպ  
իշխանություն, այլև սկսեցին արմատախիլ անել սեմական բռնապետու-  
թյան օրոք հաստատված ռեժիմի մնացորդներն ու հետևանքները: Պաշ-  
տոնից հեռացվեցին նախկինում նշանակված դրածոները, վերակազնվե-  
ցին շումերական ավանդական հոգևոր ու աշխարհիկ կարգերը: Վերսկսե-  
ցին գործել ավագների խորհուրդն ու ժողովրդական ժողովները, որոնք  
ընտրում էին իշխանավորին, և ընտրությունը համարվում էր Աստծո կամ-  
քի արտահայտություն («Զայն բազմաց ձայն Աստծոյ»): Գուղեան, ըստ  
սկզբնաղբյուրների, ընտրվել է 216 հազար ժողովորդի կողմից (կա կար-  
ծիք, որ այս թիվը պետք է կարողալ 36 հազար, որը ևս նշանակալի թիվ էր  
այն ժամանակներում):<sup>51</sup>

Կուտիական ժամանակաշրջանից մեզ հասած միջագետթյան բնագե-  
րերը պատմում են իիմնականում մաքրագործումների և կրոնական

51 ԻՃԲ, с. 262-263:

բնույթի այլ իրադարձությունների մասին, որի պատճառով հայտնվել է կարծիք, թե ուա քրնական ռեակցիայի ժամանակահատված է. ինչը ճիշտ բնորոշում չէ: Իրականում դա շումերական հոգևոր ավանդույթների վերականգնման դարաշրջան էր և պատահական չէ, որ «շումերական վերածունդը» սկսվեց հենց այդ ժամանակ: Կուտիական գերիշխանության օրոք Միջագետքն ու հարակից Երկրներն ապրեցին թափական խաղաղ, ամենուր թափ ստացավ շինարարությունը, հատկապես, ջրանցքաշինությունն ու տաճարաշինությունը:

Նարամ-Սուլենի իշխանության անկումով նքա «աշխարհի չորս կողմերի արքա» տիտղոսն անցավ կուտիական արքաներին: Ուշագրավ է, որ տեր դառնալով հսկայածավալ մի աշխարհակալության նրանք փոփոխության չենթարկեցին իրենց կարգերը, մասնավորապես արքայի ընտրության ավանդույթը: Քննելով «Շումերական արքայացանկում» պահպանված կուտի արքաների գահաժամկետները նկատում ենք մի հետաքրքիր օրինաչափություն<sup>52</sup>: Առաջին յոթ արքաների ժամկետները չեն անցնում 6 տարուց: Այնուհետև իշխում է Յարլագաբը 15 տարի. նման երկարատևությունը կարող է լինել բազմակի ընտրության արդյունք (6+6+3): Այնուհետու 4 արքաներ իշխում են մինչև 3 տարի ժամկետով: Եվս 4 արքաներ իշխում են մինչև 2 տարի, որից հետո երեք թագավորներ գահակալում են 7-ական տարի: Որոշակիորեն երևում է ընտրովի կառավարման 4 ժամկետներ 6, 3, 2 և 7 տարի: Սա խոսում է այն մասին, որ ընտրովի արքաների ինստիտուտը Յին Յունաստանից շատ ավելի վաղ գոյություն է ունեցել Յնագույն Յայաստանում:

Կուտի արքաներն անմիջապես իրենք չեն կառավարում գերիշխանության տակ մտնող Երկրները: Այդ գործը նրանք հանձնարարում էին տեղացիներից ընտրված կառավարիչներին (հմմտ. Գուդեայի վերոհիշյալ օրինակը), որոնք կանոնավոր կերպով հարկեր ու նվերներ էին ուղարկում լեռնական արքաներին: Յարկերի մեջ մտնում էին հիմնականում Երկրագործական մթերքներ (հացահատիկ, բուսական

52 Th. Jacobson, նշվ. աշխ., էջ 116-121:

յուղեր և այլն), իսկ որպես նվեր ուղարկվում էին թանկարժեք քարերից ու մետաղներից պատրաստված գահեր, գենքեր ու զարդեղներ (վերջիններս հասցեագրվում էին իիմնականում արքայական ընտանիքի անդամներին թագուհուն և արքայազուններին)<sup>53</sup>:

Իրենց գերիշխանության շուրջ հարյուրամյա ժամանակահատվածում հայաստանցի արքաները սեփական աթոռանիստը չփոխադրեցին Միջագետք կամ այլ տեղ, որի իիմնական պատճառը, թերևս, դեռ թ.ա. 28-27-րդ դարերից եկող հավատանքն էր սեփական երկրի սրբազն և ժողովրդի աստվածընտրյալ լինելու մասին<sup>54</sup>:

Նրանց կողմից բարեպաշտության հատուկ դրսերում էր հարգանքը գերիշխանության տակ գտնվող ժողովուրդների ու նրանց ավանդույթների նկատմամբ, որը պայմաններ ստեղծեց շումերական վերածննդի համար: Յարկ է նշել, որ Միջագետքում երկար պահպանվեց հիշողությունն արդարությունը վերականգնած արքաների մասին: Գերիշխանության ավարտից ավելի քան կես դար անց Լագաշ քաղաքի իշխանները շարունակում էին կրել «կուտիների երկրի կառավարիչ» տիտղոսը (սա նաև մի տեսակ հավատարմության դրսերում էր անցյալի տիրակալների նկատմամբ): Ավելացնենք, որ Լագաշը դեռևս թ.ա. 25-24-րդ դարերում հայտնի էր արդարության ու ազատության համար մղվող պայքարի համար ավանդույթներով<sup>55</sup> և հենց այդ քաղաքն էր դարձել կուտիական իշխանության պատվարը Միջագետքում:

53. Ա.Ի. Պյոմենև. Աշվ. աշխ., էջ 210-211:

54. Շումերական դյուցազնավեպում Մրատտան կոչվում է «սուրբ օրինաց երկիր». իսկ նրա ժողովուրդը բնության զարթոնքի, մեռնող ու հառնող Դումուզի աստծո ընտրյալներ:

55. В.В.Струве. Государство Лагаш. Бород за расширение традиционного права в Лагаше. XXV-XXIV вв. до нашей эры. №. 1964:

Կուտիհական աշխարհակալության մեկնակետի տեղորոշման ճշգրտումը և Կուտի(ում)ի իբրև Յայաստանի հնագույն անվանումներից մեկի պարզաբանումը հնարավորություն են տալիս լուսաբանելու հայոց հնագույն պատմության մի քանի այլ դրվագներ ևս: Ստորեւ համառոտակի կանորադարնանը դրանցից երեքին:

### «ՅԱՅԿ ԵՎ ԲԵԼ» ՎԻՊԱՍԹԻ ՊԱՏՄԱԿԱԾ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Հ

Յայագիտության մեջ բավական շատ է արծածվել թե «Յայկ և Բել» վիպասքի, և թե Յայկ նահապետի կերպարի ժամանակագրական բազմաշերտության թեման: Վիպասքում որոշակիորեն արտահայտված են հնագույն ժամանակների Յայաստան-Միջագետք հակասությունները: Յայկի մասին մեզ հասած ավանդագրույցներում միաձուլված են աստծո, անվանադիր նախնու և պատմական անձ-արքայի կերպարները: Սրանցից յուրաքանչյուրին անդրադարնալը դուրս է մեր նպատակից, նշենք սակայն, որ անկախ այն բանից, թե վիպասքի մեզ հասած տարբերակի առանցքում որ ժամանակների պատմական իրադարձություններն են նկարագրվում, նրանում արտացոլված են ավելի վաղ ժամանակների պատկերացումները: Քանի որ Յայկը ներկայանում է որպես հայոց անվանադիր նախնի-նահապետ, պետք է ակնկալել, որ վիպասքում արտահայտված լինեն հայ էթնոսի ամենավաղ շրջանի առավել ակնառու պատմական անցքերը, այն շրջանի, երբ հայերն անջատվել էին ինդեպուպական ընդհանրությունից և գտնվում էին իբրև ինքնուրույն ժողովուրդ կայացման ճանապարհին: Այդ ժամանակաշրջանը թ.ա. 3-րդ հազարամյակն էր<sup>56</sup>, ուստի միանգամայն

<sup>56</sup> Լեզվաժամանակագրական մեթոդով Գ. Բ. Զահուլյանի կատարած հաշվարկը ցույց է տալիս, որ հայերեն, անջատվելով ինդեպուպական նայու լեզվից, ինչնուրույն լեզու է դարձել թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբին. տես նրա Յայոց լեզվի պանոնություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 24-25, նույնի Զրույցներ հայոց լեզվի մասին, Ե., 1992, էջ 18-19:

տրամաբանական է, որ այդ ժամանակաշրջանի կարևորագույն իրադարձությունների որոշ արձագանքներ պահպանված լինեն վիպասքում:

Բելը (Նեբրովթ. Նեմրութ) մեր ավանդագրույցներում ներկայանում է իբրև փառամոլ արքա, որ ձգտում է համաշխարհային տիրապետության, իսկ որոշ հաջողություններից հետո փորձում է գրավել աստծո տեղը: Ք.ա. 3-րդ հազարամյակի միջագետքյան արքաների մեջ այս կերպարին ամենից ավելի հաճապատասխանում է Նարամ-Սուենը:

Ռազմական հաջողությունները, որ արտահայտվում էին նրա «աշխարհի չորս կողմերի արքա», «տիեզերքի արքա» տիտղոսներում, պատճառ դարձան սեփական ուժերի գերագնահատման, և նա պատմության մեջ առաջինը լինելով հրչակեց իրեն «աստված»: «Աքադի նզումը» պատմա-վիպական երկում հաղորդվում է, որ նա կործանեց գերագույն աստծո տաճարը և ստիպեց ժողովրդին զոհեր ճառուցել իր տաճարին: Աստվածները չհանդուժեցին նրա փառամոլությունը և հայաստանցի լեռնականների միջոցով տապալեցին նրան:

Յայկական ավանդության մեջ Միջագետքի տիրակալը մուտք է գործում Յայաստան այնտեղ փառաբանելու իրեն: Նարամ-Սուենը արձանագրում է, որ «մարդու ստեղծման ժամանակվանից ի վեր, երբեք ոչ մի թագավոր չէր կործանել Արմանը...». Ինչը և իրագործեց ինքը: Յայկական տարբերակներում Բելը սպանվում է Յայաստանում, իսկ Միջագետքի գրավոր աղբյուրների համաձայն Նարամ-Սուենը տապալվում է հայաստանյան զորքերի արշավանքի հետևանքով:

Նկատված ընդհանրությունները չի կարելի դասել պատահական նմանությունների ու զուգայիպությունների շարք և անկախ նրանից, թե վիպասքում պատմվող իրադարձությունների հիմնական մասը որ ժամանակաշրջանին են վերաբերում, «Յայկ և Բել» ավանդավեպի մեջ պետք է զատորոշել Ք.ա. 3-րդ հազարամյակից եկող կարևոր մի շերտ:

## ՏԻԳՐԱՆ ԵՐՎԱՆԴՅԱՆԸ ԳՏՏՈՒՄ Է ԻՐ ՏԵՂԸ

Մովսես Խորենացու «Յայոց պատմության» մեջ հաղորդվում է, որ Մարաստանի աշխարհալակությունը կործանող Կյուրոսի գլխավոր

դաշնակիցը Տիգրանն էր Երվանդ Սակավակյացի որդին, և ինքն էր անձամբ սպանել Աժդահակին (Աստիագեսին)<sup>57</sup>: Յույն պատմագիր Քսենոֆոնը (Ք.ա. 5-4-րդ դարեր) հաղորդում է, որ Կյուրոսն ու Տիգրանը եղել են որսընկերներ և վերջինս մասնակցել է Կյուրոսի արշավանքներին իբրև զինակից<sup>58</sup>: Դեպքերի կատարման ժամանակաշրջանում գրված և մեզ հասած բնագրերում բազմաթիվ հիշատակություններ կան Կյուրոսի մասին, իսկ Հայաստանի ու նրա արքա Տիգրանի վերաբերյալ՝ ոչինչ: Գրավոր աղբյուրների համաձայն, Կյուրոսը, Ք.ա. 553 թ. ապստամբեց Աժդահակի դեմ, և եռամյա պայքարում հաղթելով վերջինիս, հիմնեց նոր Արեմենյան տիեզրությունը: Նրա դեմ ստեղծվեց իզոր դաշինք Լյուդիայի (Փոքր Ասիա), Բաբելոնի և Եգիպտոսի մասնակցությամբ: Ք.ա. 546թ. Կյուրոսին հաջողվում է հաղթել Լյուդիային, իսկ 538-ին նվաճել Բաբելոնը:

Փոքր Ասիա հասնելու համար Կյուրոսը պետք է անցներ Հայաստանով, ուստի անհիմն կերպով ենթադրվել է, թե Հայաստանը Ք.ա. 550-546թթ. ընթացքում նվաճվել է Կյուրոսի կողմից<sup>59</sup>: Մի կողմից Կյուրոսն անշուշտ պետք է անցներ Հայաստանով (Հայաստանից հարավ բարելոնյան պետությունն էր), մյուս կողմից, սակայն, գրավոր աղբյուրներում բացակայում է Հայաստանը (Արմենիա, Ուրարտու, Արարադ կամ այլ հայտնի անվանք): Ո՞րն է գաղտնիքը:

Վերը շարադրված մեր ուսումնասիրությունից միանգամայն պարզ է, որ Կուտիումը, աշխարհակալության ժամանակներից սկսած, դառնում է Հայաստանին տրված ընդհանրական անուններց մեկը և Ք.ա. 8-րդ դարում գործածվում իբրև Ուրարտու անվան հոմանիշ: Ք.ա. 6-րդ դարի բնագրերում հաղորդվում է, որ Կյուրոսի պետության գլխավոր դաշնակիցը Կուտիում (իմա՝ Հայաստան) երկիրն էր, ինչը լիովին համապատասխանում է Քսենոֆոնի և Խորենացու տվյալներին: Դեռ

57 Գիրք Ա, գլուխ ԻՇ-ԻԹ:

58 Քսենոֆոնի «Կյուրոսեփիայի» հայերին վերաբերող հատվածները տես Հ. Մանանդյան, Երկեր, հատոր Ա, էջ 384-400:

59 Հայ ժողովրդի պատմություն, հատոր I, Ե., 1971, էջ 446-447:

ավելին. որանցում պատմվում է<sup>60</sup>, որ Կուտիումի արքան է առաջնորդել դաշնակից բանակները Բաբելոնի դեմ և գրավել այն թ.ա. 538թվին, որից հետո դարձել է «Բաբելոնի փոխարքա» - Երկրորդ դեմքը Աքեմենյան կայսրության մեջ, դաշնակցային սկզբունքով պահպանելով իր Երկրի անկախությունը: Ուստի միանգամայն պարզ է, որ թ.ա. 550-546 թթ. ընթացքում Կյուրոսի կողմից Հայաստանի նվաճում չի եղել և չեր կարող լինել, քանի որ Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի գլխավոր դաշնակիցն էր:

Բաց է մնում մեկ հարց. Կուտիումի տիրակալը բնագրերում հիշվում Ուգբարու կամ Գուբարի անվանք. ինչը չի համընկնում Տիգրանին: Արդյո՞ք սա անվան թարգմանություն է կամ պատվանուն-մակդիր. դժվար է ասել: Չլինելով իրանագետ լեզվաբան, մենք ձեռնպահ ենք մնում որևէ լուծում առաջարկելուց այն թողնելով համապատասխան մասնագետներին:

### ԲԱԲԵԼՈՆՅԱՆ «ՆՈՅԻ» ԴԱՍԳՐՎԱԾԸ

Համաշխարհային ջրհեղեղի մասին բազմաթիվ գրավոր ու բանավոր ավանդագրույցներ են հասել մեզ<sup>61</sup>: Դրանց մեջ սյուժետային ընդհանրությամբ առանձնանում է միջագետքյան խումբը, որի գարգացած տարբերակը տեղ է գտել Հին Կտակարանի Ծննդոց գրքում: Այդ խմբի հնագույն բնագիրը շումերական ավանդագրույցն է<sup>62</sup>, որում չի պահպանվել այն վայրի անունը, ուր կանգ առավ ջրհեղեղից փրկված նավը: Բաբելոնյան «Գիլգամեշ» էպոսի 11-րդ պնակիտում<sup>63</sup> պատմվում

60 Хрестоматия по истории Древнего Востока, ч. 2, М., 1980, с.

61 Դրանց մեծ մասը տես Ջ. Ջ. Ֆրանզ, Փոլքլոր և Յետհու, Մ., 1985, с. 63-160:

62 С.Н. Крамер, История начиняется в Шумере, М., 1965, с. 175-180:

63 Հին Արևելքի պոեզիա, Ե., 1982, էջ 160-161:

է, որ նավը կանգ է առել Նիսիր կամ Նիմուշ<sup>64</sup> լեռան վրա, որի ճշգրիտ տեղն անհայտ է: Բաբելոնի գերագույն աստծո տաճարի քրմապետ Բերոսոսի (Ք.ա. 4-3-րդ դդ.) «Բաբելոնիկա» աշխատության համաձայն (որը գրվել է միջագետքյան սեպագիր աղբյուրների հիման վրա) փրկվողներն ապաստանեցին Յայաստանում<sup>65</sup>: Յին Կտակարանը ևս փրկության վայրը հաճարում է Արարատ/Դ-Յայաստանի լեռները<sup>66</sup>: Յին Արևելքին հաջորդած գրավոր ավանդությունը ևս (Յովսեպոս Փլավիոս<sup>67</sup>, Մովսես Խորենացի<sup>68</sup> և ուրիշներ), իհմնվելով իհնմիջագետքյան աղբյուրների վեա, փրկության երկիր են համարում Յայաստանը:

Ըստ Ղուրանի, որը նույնպես սնվել է հիշյահ ակունքներից, փրկվածների տապանն ապաստան է գտնում Կորդվաց լեռներում, որոնք կոչվում են ալ-Ջուդի<sup>69</sup> (Զուդին Կուտի/Գուտիի արարականացված տարբերակն է): Փաստորեն, ողջ ավանդությունը, որը վկայված է ավելի քան 3 հազար տարվա ընթացքում (Ք.ա. 3-րդ հազարամյակի վերջից մինչև Ք.հ. 1-ին հազարամյակի ավարտը), իբրև ջրհեղեղից փրկող երկիր հանդես է գալիս Յայաստանը (կամ ավելի կոնկրետ նրա հարավային Կորդվաց լեռները): Բաց է մնում բաբելոնյան էպոսում հիշատակվող Նիսիր/Նիմուշ լեռան տեղադրության հարցը: Եւ այստեղ ևս հանգուցալուծող բանալին մեզ տալիս է կուտիական իհմնախմբի ճշգրտումը:

<sup>64</sup> Անունը հնարավոր է կարդալ երկու տարբերակով: Առոշ փաստերի առկայությունից ելնելով՝ Նախընտրելի է համարվում Նիմուշը (W.G. Lambert, Nisir or Nimus?, RA, 1986, vol LXXX, № 2, p. 185-186):

<sup>65</sup> P. Schnabel, Berossos und die babylonisch-hellenistische Literatur, Leipzig-Berlin, 1926, S. 264-266:

<sup>66</sup> Գիրք Շննդոց, 8, 1-4:

<sup>67</sup> Յովսեպոս Փլավիոս, Ընդդեմ Ապիոնի, Օտար ալբյուրները Յայաստանի և հայերի մասին, 9, Ե., 1976, էջ 28:

<sup>68</sup> Մովսես Խորենացի, Յայոց պատմություն, Գիրք Ա, գլ. 2:

<sup>69</sup> Ղուրան, 11, 38-46:

Ասորեստանի արքա Աշուրնածիրապլի 2-րդը (թ.ա. 9-րդ դար) իր տարեգրություններում իշխառակում է Նիսիր/Նիմուշ լեռը<sup>70</sup> կապված կուտիմերի երկրի հետ, իսկ վերջինս, ինչպես պարզ դարձավ վերոշարադրյալ նյութից, տեղադրվում է Կորդուքի տարածքում: Դարձը ստանում է իր լուծումը. ջրիեղեղի մասին պատճող բարելոնյան գրուցի առանցքային հարցերից մեկով փրկության հանգրվանի նշմանք. չի տարբերվում ընդհանուր հինգիչագետքյան ավանդությունից: Ուստի և Նիսիր/Նիմուշը պետք է տեղադրել Կորդվաց լեռներում:

Այսպիսով տեսնում ենք, որ կուտիական աշխարհակալության ճիշտ վերագնահատումը կարևոր լուսաբանումներ է մտցնում Հայաստանի հնագույն պատճության այլ հարցերում ևս: Չի բացառվում, որ մեր նշածներից բացի այն լույս սփոթ նաև ուրիշ խնդիրների վրա:

## ՎԵՐԶԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ավարտելուց առաջ նշենք, որ այս գրքույկը հակիրճ մի հաղորդում է նրանում արծարծվող իիմնախնդրի վերաբերյալ: Տեղի սղության պատճառով աշխատանքում չվկայակոչվեց առեւս գրականության մեծ մասը. չարվեցին բնագրային մեջբերումներ: Գրքույկի նպատակը Հայաստանի պատճության չափազանց հետաքրքիր մի հատվածի ընդհանուր գծերով վերականգնումը և հայագիտության շրջանառության մեջ դնելն է: Կարծում ենք, որ նշված բերություններով հանդերձ այս գրքույկը կարող է մեկնակետ դառնալ մեր պատճության համար վերագտնված դարաշրջանի հետազոտման ասապարեզում, որում կպահանջվի աղբյուրագետ-պատճաբանի, լեզվաբանի, հնագետի և այլոց ջանքերի համատեղում:

<sup>70</sup> A.K. Grayson, Assyrian Royal Inscriptioins, vol. 2. Wiesbaden, 1976, p.128-9

Ի մի բերելով Վերը շարադրված նյութը տեսնում ենք որ հնագույն բնագրերի ուսումնասիրությունը բռույ է տալիս ի հայտ բերելու Դայաստանին տրված հնագույն ընդհանրական անուններից մեկը, որը կապում է Ք.ա. 3-րդ հազարամյակի Արատտան Ք.ա. 1-ին հազարամյակի Ուրարտու-Դայաստանին: Լուսաբանվում են մեր պատմության նոր դրվագներ: Վերականգնվում և իր տեղն է գրավում փառահեռ մի դարաշրջան դարաշրջանը մի աշխարհակալության, որը ստեղծվեց այսօր հայտնի առաջին բռնակալությունը կործանող ազատարարների կողմից: Դա աշխարհակալություն էր Տիգրան Մեծից շուրջ Երկու հազար տարի առաջ, որը տարածքով չգիշելով տիգրանյան սահմաններին տևողությամբ գերազանցում է նրան մի քանի անգամ: Դա բարեպաշտ արքաների աշխարհակալությունն էր... ”

### ՀԱՄԱՈՒՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՀԱ -** Հանդէս ամսօրեայ, Վիէննա
- АВИИУ -** И.М.Дьяконов, Ассирио-аввилонские источники по истории Урарту, "Вестник древней истории," 1951, N 2-4
- ИДВ -** История Древнего Востока, I. Месопотамия, М., 1983
- ТҮ -** Н.В.Арутюняն, Топономика Урарту, Е., 1985
- ANET -** Ancient Near Eastern Texts (ed. by J.B.Pritchard), New Jersey, 1969
- ИКА -** H.Hirsch, Die Inschriften der Könige von Agade. "Archiv für Orientforschung", 1963, Bd. 20, S. 1-82
- IRSA -** E.Sollberger et J.-R. Kupper, Inscriptions Royales Sumeriennes et Akkadiennes, Paris, 1971
- RA -** Revue d'assyriologie et d'archeologie orientale, Paris
- RISA -** G.A. Barton, The Royal Inscriptions of Sumer and Akkad, New Hawen, 1929

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ՍԿԶԲՆԱՊՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ	5
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՍՑՈՒՏ ԱԿՆԱՐԿ	8
ԿՈՒՏԻԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԿԵՏԸ	13
ԱՇԽԱՐԴԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐՅՈՒԹՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ	17
ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	21
ԼՈՒԱԲԱՎԱԿՈՂ ՊՐՎԱԳՆԵՐ	24
«ՅԱՅԿ ԵՎ ԲԵԼ» ՎԻՊԱՍԹԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՈՒՏԵՔՆԵՐՈՒՄ	24
ՏԻԳՐԱՆ ԵՐՎԱՆԴՅԱՆԸ ԳՏՆՈՒՄ ԻՐ ՏԵՂԸ	25
ԲԱԲԵԼՈՆՅԱՆ «ՆՈՅԻ» ՅԱՆԳՐՎԱՆԸ	27
ՎԵՐԶԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ	29
ՀԱՄԱՊՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ	30

Ա. Մովսիսյան

Բ ա ր ե պ ա շ տ ա ր ք ա ն ե ր ի  
ա շ ի ս ա ր հ ա կ ա լ ո ւ թ յ ո ւ ն ը

2

*Հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից ստաց*

---

«Ապոլոն» իրատարակչություն. Երևան, Գր.Լուսավորիչի-15  
Տպագրված է Կոտայքի պոլիգրաֆիական «Ազատ» ՓԲԸ

---

Ծավալը՝ 2 տպ. մամուլ: Ֆորմատ՝ 60X84 1/16  
Տպագրությունը՝ օֆսեթ:  
Տպաքանակը՝ 1000: Պատվեր  
Գինը՝ պայմանագրային:



